ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հոկտեմբերի 2019 թվականի N 712-Ա

ԳՐԵՏԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի թիվ 50 տան բնակիչ Գրետա Խաչատուրի Գրիգորյանի վերաբերյալ, այն է՝ Գրետա Խաչատուրի Գրիգորյանը կենսաթոշակառու է, ներկայումս բնակվում է ընտանիքի մեկ անձով, ունի առողջական խնդիրներ և իր սոցիալական վիճակից ելնելով դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Գրետա Խաչատուրի Գրիգորյանին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գրետա Խաչատուրի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հոկտեմբերի 2019 թվականի N 713-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Արա Խաչատուրի Մարկոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0314-0076 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 521,9 քառ.մ մակերեսով, փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18102019-07-0237, տրված 2019 թվականի հոկտեմբերի 18-ին):

2.Արա Խաչատուրի Մարկոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0314-0076 կադաստրային համարի 521,9 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 55-րդ փողոց, թիվ 20:

3.Առաջարկել Արա Խաչատուրի Մարկոսյանին, եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի 900105228176 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 299 231 (երկու միլիոն երկու հարյուր ինսունինը հազար երկու հարյուր երեսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արա Խաչատուրի Մարկոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2019 թվականի N 714-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29, 30-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 16-րդ փողոցի թիվ 28 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-057-0361-0044 կադաստրային ծածկագրով բնակավայրի հասարակական կառուցապատման 2,01378 հա մակերեսով գույքից բաժանված S_1=1,99627 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 16-րդ փողոց, թիվ 28, S_2=0,0175 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 16-րդ փողոց, թիվ 28/2:

2. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանի վրա:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 28
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2019 թվականի N 715-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ և 48-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 39-րդ փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 4919,1 քառ.մ մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողակտորին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 39-րդ փողոց, թիվ 9:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 39-րդ փողոցի թիվ 9 հասցեում գտնվող գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 28
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2019 թվականի N 716-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Քյալաշ Մրազի Դրբոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0331-0001 կադաստրային համարի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Քյալաշ Մրազի Դրբոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 28
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2019 թվականի N 717-Ա

ՔԱՆԴՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Սերգեյ Միքայելի Գալոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական տարածքի 7-րդ թաղամասի թիվ 16/1 հասցեի հողամասում թույլատրել քանդելու անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12032018-07-0055 վկայականում նշված թիվ 1 այգետնակը՝ 101,1 քառ.մետր և թիվ 2 ջրավազանը՝ 11,34 քառ.մետր մակերեսներով:

2.Քաղաքացի Սերգեյ Միքայելի Գալոյանին տալ նկուղային հարկով մեկ հարկանի բնակելի տան և կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական տարածքի 7-րդ թաղամասի թիվ 16/1 հասցեի հողամասում:

3.Պարտավորեցնել Սերգեյ Միքայելի Գալոյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սերգեյ Միքայելի Գալոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 28
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հոկտեմբերի 2019 թվականի N 718-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Նարինե Լևոնի Այվազյանին տալ այգետնակի վերակառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի այգեգործական տարածքի 7-րդ թաղամասի թիվ 2 հասցեի հողամասում:

2.Պարտավորեցնել Նարինե Լևոնի Այվազյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարինե Լևոնի Այվազյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 28
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հոկտեմբերի 2019 թվականի N 719-Ա

ԳՈՒՅՔԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ռաֆիկ Սիմոնի Վարդանյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել վարձակալության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին թաղամասի թիվ 3/19 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների 406,2 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում կառուցված թիվ 1 ծածկը՝ 73,37 քառ.մետր և թիվ 2 ծածկը՝ 145,16 քառ.մետր մակերեսներով, ենթավարձակալության հանձնելու «ԱՆԱՆԻԱ-ԳԵՂԱՄ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Անանիա Մնացականյան (հիմք՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, վավերացված 2014 թվականի սեպտեմբերի 12-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածի, 470-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել Ռաֆիկ Սիմոնի Վարդանյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին թաղամասի թիվ 3/19 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների 406,2 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում կառուցված թիվ 1 ծածկը՝ 73,37 քառ.մետր և թիվ 2 ծածկը՝ 145,16 քառ.մետր մակերեսներով, ենթավարձակալության հանձնելու «ԱՆԱՆԻԱ-ԳԵՂԱՄ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Անանիա Մնացականյան:

2. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանի վրա:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռաֆիկ Սիմոնի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հոկտեմբերի 2019 թվականի N 720-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Տիրուհի Գեղամի Ավետիսյանի (ծնված՝ 1957 թվականի օգոստոսի 10-ին) և Լիլիթ Հակոբի Շահինյանի (ծնված՝ 1989 թվականի նոյեմբերի 11-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բարեկամության փողոցի թիվ 23 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Աբովյանի տարածքային ներկայացուցչության կողմից 2019 թվականի օգոստոսի 7-ին տրված թիվ Աբ-1676 արխիվային տեղեկանքը, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 28-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Տիրուհի Գեղամի Ավետիսյանին և Լիլիթ Հակոբի Շահինյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բարեկամության փողոցի թիվ 23 հասցեի հողամասում 1990-1992 թվականներին ինքնակամ կառուցվել են՝ բնակելի տուն կիսանկուղ 136,66 քառ.մետր, բաց պատշգամբ կիսանկուղ՝ 32,49 քառ.մետր, բնակելի տուն 1-ին հարկ՝ 136,66 քառ.մետր, աստիճանավանդակ՝ 8,26 քառ.մետր, հարթակ՝ 32,78 քառ.մետր, զուգարան՝ 1,99 քառ.մետր, հենապատ՝ 2,01 քառ.մետր և պարիսպ՝ ընդհանուր 34,73 քառ.մետր արտաքին մակերեսներով (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացի Տիրուհի Գեղամի Ավետիսյանի և Լիլիթ Հակոբի Շահինյանի դիմումում և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից չափագրված և հաստատված հատակագծի մեջ նշված տարեթվերը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գեղամի Ավետիսյանին և Լիլիթ Հակոբի Շահինյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բարեկամության փողոցի թիվ 23 հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շենք-շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Տիրուհի Գեղամի Ավետիսյանին և Լիլիթ Հակոբի Շահինյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բարեկամության փողոցի թիվ 23 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տուն կիսանկուղը 136,66 քառ.մետր, բաց պատշգամբ կիսանկուղը՝ 32,49 քառ.մետր, բնակելի տուն 1-ին հարկը՝ 136,66 քառ.մետր, աստիճանավանդակը՝ 8,26 քառ.մետր, հարթակը՝ 32,78 քառ.մետր, զուգարանը՝ 1,99 քառ.մետր, հենապատը՝ 2,01 քառ.մետր և պարիսպը՝ ընդհանուր 34,73 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Տիրուհի Գեղամի Ավետիսյանին և Լիլիթ Հակոբի Շահինյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հոկտեմբերի 2019 թվականի N 721-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Աշոտ Հարությունի Մանուկյանի (ծնված՝ 1972 թվականի նոյեմբերի 24-ին), Ռիմա Գևորգի Մանուկյանի (ծնված՝ 1945 թվականի փետրվարի 27-ին) և Հարություն Աշոտի Մանուկյանի (ծնված՝ 1940 թվականի ապրիլի 25-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 11 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ նշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի N 721873 վկայականը, տրված 2001 թվականի մայիսի 18-ին, անհատ ձեռնարկատեր Աշոտ Հակոբյանի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 15-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Աշոտ Հակոբյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Աշոտ, Ռիմա և Հարություն Մանուկյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 11 հասցեի տնամերձ հողամասում 2015 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն 1-ին հարկ՝ 25,93 քառ.մետր, աստիճանավանդակ՝ 2,74 քառ.մետր, բնակելի տուն 2-րդ հարկ՝ 10,61 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 15,32 քառ.մետր, նկուղ՝ 17,75 քառ.մետր, ավտոտնակ՝ 54,28 քառ.մետր, ծածկ՝ 7,63 քառ.մետր, զուգարան՝ 2,65 քառ.մետր և պարիսպ՝ 4,23 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աշոտ, Ռիմա և Հարություն Մանուկյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 11 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Աշոտ, Ռիմա և Հարություն Մանուկյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 11 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տուն 1-ին հարկը՝ 25,93 քառ.մետր, աստիճանավանդակը՝ 2,74 քառ.մետր, բնակելի տուն 2-րդ հարկը՝ 10,61 քառ.մետր, բաց պատշգամբը՝ 15,32 քառ.մետր, նկուղը՝ 17,75 քառ.մետր, ավտոտնակը՝ 54,28 քառ.մետր, ծածկը՝ 7,63 քառ.մետր, զուգարանը՝ 2,65 քառ.մետր և պարիսպը՝ 4,23 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 276 963 (երկու հարյուր յոթանասունվեց հազար ինը հարյուր վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Աշոտ, Ռիմա և Հարություն Մանուկյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հոկտեմբերի 2019 թվականի N 722-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լևոն Գևորգի Սաֆարյանի (ծնված 1990 թվականի հունիսի 28-ին) դիմումը՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 19-րդ փողոցի թիվ 42/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի խառը կառուցապատման 241,6 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված օժանդակ շինությունը՝ 28,63 քառ.մետր և պարիսպը 3,11 քառ.մետր մակերեսներով, իրեն օտարելու մասին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21102019-07-0130, տրված 2019 թվականի հոկտեմբերի 21-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 և 35.1-րդ կետերով, ***որոշում եմ.***

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 19-րդ փողոցի թիվ 42/1 հասցեում գտնվող բնակավայրի խառը կառուցապատման 241,6 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված օժանդակ շինությունը՝ 28,63 քառ.մետր և պարիսպը 3,11 քառ.մետր մակերեսներով, օտարել կառույցն իրականացրած Լևոն Գևորգի Սաֆարյանին:

2.Պարտավորեցնել Լևոն Գևորգի Սաֆարյանին՝ մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 2 704 629 (երկու միլիոն յոթ հարյուր չորս հազար վեց հարյուր քսանինը) Հայաստանի Հանրապետության դրամ, շինությունների վաճառքի արժեքը՝ 165 048 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքելու անշարժ գույքի օտարման պայմանագիր:

4.Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լևոն Գևորգի Սաֆարյանին որոշման ընթացքի մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հոկտեմբերի 2019 թվականի N 723-Ա

ՋՐՎԵԺԻ 19-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 40 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան են դիմել Լևոն Գևորգի Սաֆարյանը (ծնված՝ 1990 թվականի հունիսի 26-ին) և Անի Արարատի Ղազարյանը (ծնված՝ 1989 թվականի օգոստոսի 31-ին), ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 19-րդ փողոցի թիվ 40 հասցեում գտնվող 1325,0 քառ.մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորից բնակավայրի խառը կառուցապատման հողակտորի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18062019-07-0070, տրված 2019 թվականի հունիսի 18-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Լևոն Գևորգի Սաֆարյանին և Անի Արարատի Ղազարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 19-րդ փողոցի թիվ 40 հասցեում գտնվող 1325,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրի խառը կառուցապատման հողակտորի:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված հողի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

3.Պարտավորեցնել Լևոն Գևորգի Սաֆարյանին և Անի Արարատի Ղազարյանին՝ որոշումից բխող իրավունքները գրանցել անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լևոն Գևորգի Սաֆարյանին և Անի Արարատի Ղազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հոկտեմբերի 2019 թվականի N 724-Ա

ՋՐՎԵԺԻ 19-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան են դիմել Լևոն Գևորգի Սաֆարյանը (ծնված՝ 1990 թվականի հունիսի 26-ին) և Անի Արարատի Ղազարյանը (ծնված՝ 1989 թվականի օգոստոսի 31-ին), ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 19-րդ փողոցի թիվ 42 հասցեում գտնվող 1000,0 քառ.մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորից բնակավայրի խառը կառուցապատման հողակտորի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14062019-07-0015, տրված 2019 թվականի հունիսի 14-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Լևոն Գևորգի Սաֆարյանին և Անի Արարատի Ղազարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 19-րդ փողոցի թիվ 42 հասցեում գտնվող 1000,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրի խառը կառուցապատման հողակտորի:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված հողի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

3.Պարտավորեցնել Լևոն Գևորգի Սաֆարյանին և Անի Արարատի Ղազարյանին՝ որոշումից բխող իրավունքները գրանցել անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լևոն Գևորգի Սաֆարյանին և Անի Արարատի Ղազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հոկտեմբերի 2019 թվականի N 725-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 40-Ն և նոյեմբերի 28-ի N 45-Ն որոշումները, ***որոշում եմ.***

1.Ջրվեժ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:

2.Հաստատել Ջրվեժ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:

3.Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Ջրվեժ համայնքի ղեկավարին կից «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման» խորհրդակցական մարմնի անդամ Անահիտ Մարգարյանին:

4.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել Ջրվեժ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի, վարչական ղեկավարների նստավայրերում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղերում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻՊԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 31
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի
31-ի թիվ 725-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Ջրվեժի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2019 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 18-ը ներառյալ կազմակերպվող Ջրվեժ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարկված Ջրվեժ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կարող են մինչև 2019 թվականի նոյեմբերի 18-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնել համացանցային կայքում (www.jrvezh.am) կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով (jrvezh.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել Ջրվեժի համայնքապետարան:

Հանրային քննարկումների բաց լսումները տեղի կունենան Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրում՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ին ժամը 16:00-ին, Ջրվեժի համայնքապետարանում, հասցեն՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 76:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010-684-929, 055-735-553 հեռախոսահամարներով:

Ջրվեժի համայնքապետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հոկտեմբերի 2019 թվականի N 726-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Արման Իգորի Ավանեսյանին տալ L=6 գծմ՝ D=25 մմ ջրագծի և L=8 գծմ՝ D=100 մմ կոյուղու կառուցման շինարարության թույլտվություն՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 23 հասցեի հողակտորում ջրամատակարարումն ապահովելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արման Իգորի Ավանեսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 31
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հոկտեմբերի 2019 թվականի N 727-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արման Իգորի Ավանեսյանին տալ նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան, օժանդակ շինությունների, լողավազանի կառուցման և պարսպապատման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 23 հասցեի հողամասում:

2.Պարտավորեցնել Արման Իգորի Ավանեսյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արման Իգորի Ավանեսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 31
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հոկտեմբերի 2019 թվականի N 728-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Քյալաշ Մրազի Դրբոյանին տալ պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0331-0001 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողամասում:

2.Պարտավորեցնել Քյալաշ Մրազի Դրբոյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Քյալաշ Մրազի Դրբոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 31
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» նոյեմբերի 2019 թվականի N 729-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Աստղիկ Հովհաննեսի Թամամյանի դիմումը՝ հողամասից կամովին հրաժարվելու մասին, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Աստղիկ Հովհաննեսի Թամամյանի կողմից կամովին հրաժարված 07-057-0338-0110 կադաստրային համարի 24,6 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ իրավունքների պետական գրանցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» նոյեմբերի 2019 թվականի N 730-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1. Աստղիկ Հովհաննեսի Թամամյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0338-0109 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 500,2 քառ.մ մակերեսով, փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30102019-07-0101, տրված 2019 թվականի հոկտեմբերի 30-ին):

2. Աստղիկ Հովհաննեսի Թամամյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0338-0109 կադաստրային համարի 500,2 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 4/52:

3.Առաջարկել Աստղիկ Հովհաննեսի Թամամյանին, եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի 900105228176 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 243 397 (երկու միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Լևոն Մխիթարյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Աստղիկ Հովհաննեսի Թամամյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 1
գ. Ջրվեժ